

ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ

Չորեքշաբթի, 25 Ապրիլի 2007

Միացեալ Նահանգների արեւմտեան շրջանի հայութիւնը համագաղութային միջոցառումներով նշեց Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցը: Երեքշաբթի, Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 10-ից մինչեւ ճաշից յետոյ ժամը 2-ը Սոնթբէլլոյի Նահատակաց Յուշարձանի առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որից յետոյ ի խորհրդանշումն հայրենի ժողովրդի Ծիծեռնակաբերդ կատարած երթի, հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչների եւ բազմահազար հայերի մասնակցութեամբ կատարուեց ծաղիկների գետեղման արարողութիւն :



Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ բողոքի ցոյց՝ Լոս Անջելոսում Թուրքական Հիւպատոսարանի առջեւ: Ցոյցին մասնակցում էին շուրջ 5000 լոսանջելոսահայեր: Իսկ երեկոյեան ժամը 6:30-ին, Գլենդէլի քաղաքապետական խորհրդի կազմակերպութեամբ, Գլենդէլի Alex Theatre հանդիսասրահում, կայացաւ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման յատուկ միջոցառում, որի ընթացում ելոյթ ունեցան քաղաքապետարանի եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:



ՀՅԴ Սոնթբէլլոյի Դրօ Կոմիտէութեան եւ Հայ Դատի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Շաբաթ, Ապրիլի 23-ի երեկոյեան ժամը 7-ից Սոնթբէլլոյի Նահատակաց Յուշարձանի շուրջ տեղի ունեցաւ Հսկման յատուկ արարողութիւն, որի ընթացքում ելոյթ ունեցան Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներն ու «Մեսրոպեան» Ազգային Վարժարանի աշակերտները:



ՀՅԴ Օրէնջ քառնթիի Հայ Դատի Յանձնախումբը տեղեկացնում է, որ Կիրակի, Ապրիլի 22-ի ճաշից յետոյ ժամը 1:00-ին Քոստա Մեսայի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակից տեղի է ունեցել քայլարշաւ՝ Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի առիթով: Քայլարշաւին մասնակցել են շրջանի հայկական բազմաթիւ կազմակերպութիւնների ու հայ համայնքի բազմաթիւ անդամներ: Քայլարշաւը աւարտուել է Սանթա Անայի Սուրբ Քառասնից Սանկանց եկեղեցւում, ուր կայացել է յիշատակութեան յատուկ ծրագիր: Միջոցառմանը ելոյթ են ունեցել Հայ Դատի Յանձնախմբի եւ շրջանի հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:



Երեքշաբթի, Ապրիլի 24-ի երեկոյեան ժամը 6-ին Բըրբանքի քաղաքապետական խորհրդի հերթական նիստի ընթացքում, ՀՅԴ Բըրբանքի Հայ Դատի Յանձնախմբին է յանձնուել քաղաքի հռչակագիրը՝ Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի ոգեկոչման առիթով:

ՀՅԴ Սան Ֆերնանդօ հովտի «Ռոստոմ» Կոմիտէութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, Ապրիլի 22-ի երեկոյեան ժամը 7-ին, Էնսինոյի «Ֆերահեան» Ազգային Վարժարանի «Աւետիսեան» սրահում տեղի է ունեցել ոգեկոչման ձեռնարկ՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցին:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Շանթ Ուսանողական միութեան կազմակերպութեամբ, Ուրբաթ, Ապրիլի 20-ի երեկոյեան ժամը 7:30-ին Փասադէնայի Հայ Կենտրոնում տեղի է ունեցել «Երիտասարդական Հաւաք», որի ընթացքում ելոյթ են ունեցել Շանթ Ուսանողական միութեան եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկայացուցիչները: Գործադրուել է նաեւ գեղարուեստական ծրագիր՝ Լոս Անջելոսի հայ

արեստագետների ու ասմունքողների մասնակցութեամբ:



Գլենդէլի Հայ Դատի Յանձնախումբը, քաղաքապետարանի եւ Ամերիկեան Կարմիր Խաչ կազմակերպութեան համագործակցութեամբ, կազմակերպել էր արեան նուիրատուութեան միջոցառում ի յիշատակ 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան զոհերի: Միջոցառումը տեղի է ունեցել Կիրակի, Ապրիլի 22-ի առաւօտեան ժամը 11-ից մինչեւ երեկոյեան ժամը 5-ը:



Գլենդէլի պետական չորս միջնակարգ դպրոցներում գործող հայկական աշակերտական ակումբների համատեղ ջանքերով կազմակերպուել էր Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի ոգեկոչման ձեռնարկ, որը տեղի է ունեցել Երկուշաբթի, Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 8:30-ին, Glendale High միջնակարգ դպրոցի հանդիսասրահում: Միջոցառմանը մասնակցել են ինչպէս հայ, այնպէս այլ ազգութիւնների պատկանող բազմաթիւ աշակերտներ:



Գլենդէլի «Շամլեան» Ազգային Վարժարանը նախորդ տարիների նման, այս տարի եւս կազմակերպել էր քայլարշաւ Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար: Վարժարանի աշակերտները իրենց ուսուցիչների ու ծնողների առաջնորդութեամբ, Շաբաթ, Ապրիլի 21-ի առաւօտեան ժամը 8:30-ին, դպրոցի շրջափակից քայլել են մինչեւ Սուրբ Աստուածածին եկեղեցի: Քայլարշաւը տեւել է շուրջ 5 ժամ:



Արիզոնայի Ֆինիքս քաղաքի Սրբոց Առաքելոց եկեղեցուն Կիրակի, Ապրիլի 22-ին, մատուցուել է Սուրբ Պատարագ եւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Յաւարտ պատարագի, եկեղեցույ սրահում տեղի է ունեցել ոգեկոչման ձեռնարկ՝ Ֆինիքսի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ Հայ Եկեղեցույ Երիտասարդաց Կազմակերպութեան (Armenian Church Youth Organization) համատեղ նախաձեռնութեամբ:



Երկուշաբթի, Ապրիլի 23-ի երեկոյեան, Ֆինիքսի Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանի շուրջ տեղի է ունեցել մոմավառութեան եւ հսկման արարողութիւն՝ Ֆինիքսի Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի Ոգեկոչման Յանձնախմբի կազմակերպութեամբ: Յանձնախմբին մաս էին կազմում ՀՀԴ Արիզոնայի Գերբ Զաւուշ Կոմիտէութեան, Հայ Դատի Յանձնախմբի, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, Հայ Օգնութեան Միութեան Ֆինիքսի «Արարատ» մասնաճիւղի, ՀՍԸՄ Ֆինիքսի մասնաճիւղի եւ Սրբոց Առաքելոց եկեղեցույ Հոգաբարձութեան ներկայացուցիչները:



Երեքշաբթի, Ապրիլի 24-ի կէսօրուայ ժամին, Ֆինիքսի Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը կազմակերպել էր քայլարշաւ, որն սկսուել է քաղաքի կենտրոնական զբօսայգուց եւ աւարտուել Ֆինիքսի Պետական շէնքի շրջափակում, ուր տեղի է ունեցել քաղաքական հաւաք: Ելոյթ են ունեցել Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներն ու պետական անձինք:



Հիւստընի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կազմակերպութեամբ Ուրբաթ Ապրիլի 21-ի երեկոյեան ժամը 4-7-ը եւ Շաբաթ Ապրիլի 22-ի կէսօրին, ժամը 12-ից 3-ը, քաղաքի բանուկ ճանապարհներից մէկի խաչմերուկում տեղի է ունեցել հաւաք, որի ընթացքում անցորդներին թռուցիկներ են բաժանուել եւ տեղեկութիւններ տրուել՝ Թուրքիայի կողմից պետականօրէն ծրագրուած ու գործադրուած Հայոց Ցեղասպանութեան մասին:



ՀՀԴ Հիւստընի Սերոբ Աղբիւր կոմիտէութեան եւ Հայ Դատի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Ապրիլի 28-ի երեկոյեան ժամը 6-ին, Հիւստընի

Ողջակիզման Թանգարանի հանդիսասրահում տեղի է ունեցել Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի ոգեկոչման ձեռնարկ, որի ընթացքում ելոյթ են ունեցել Հիւստոնի հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներն ու պետական անձինք:



Սան Ֆրանցիսկոյի Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանի մօտ, Ապրիլի 22-ի ճաշից յետոյ ժամը 3-ին տեղի է ունեցել հոգեհանգստեան արարողութիւն 1915 թուականի հայոց զոհերի յիշատակին: Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին հայոց եկեղեցում տեղի է ունեցել յիշատակութեան արարողութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչման Սան Ֆրանցիսկոյի Յանձնախմբի կազմակերպութեամբ:



Ապրիլի 24-ի երեկոյեան ժամը 5:30-ին, Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանում տեղի է ունեցել ոգեկոչման յատուկ միջոցառում, որի ընթացքում քաղաքապետական խորհրդի կողմից հայութեանն է յանձնուել քաղաքապետարանի հռչակագիրը Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի առիթով: Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, Սան Ֆրանցիսկոյի Herbst Theatre հանդիսասրահում տեղի է ունեցել գեղարուեստական ձեռնարկ՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեանը:



ՀՅԴ Ֆրեզնոյի Թեհլիրեան կոմիտէութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, Ապրիլի 21-ին, տեղի է ունեցել համերգ՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեանը: Բազմաթիւ հայերի ներկայութեամբ ելոյթ են ունեցել երգիչներ Արմէն Մովսիսեանն ու Լիլիթ Պիպոյեանը:



Կիրակի, Ապրիլի 22-ին Սողոմոն Թեհլիրեանի Յուշարձանի առջեւ տեղի է ունեցել ոգեկոչման յատուկ արարողութիւն, ՀՅԴ Ֆրեզնոյի Թեհլիրեան կոմիտէութեան կազմակերպութեամբ : Միջոցառմանը մասնակցել են բազմաթիւ հայեր:



Երեքշաբթի, Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 9-ին, Ֆրեզնոյի քաղաքապետական շէնքի առջեւ տեղի է ունեցել Հայոց Եռագոյն դրօշի բարձրացման արարողութիւն, որին մասնակցել են քաղաքապետական խորհրդի անդամներ, պետական պաշտօնատարներ ու հայ համայնքի ներկայացուցիչներ: Իսկ նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, First Presbyterian եկեղեցում Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցի առիթով տեղի է ունեցել եկեղեցական յատուկ արարողութիւն, որին մասնակցել են շրջանի բոլոր եկեղեցիների հոգեւոր հայրերը: Ինչպէս յայտնում են ՀՅԴ Ֆրեզնոյի Թեհլիրեան կոմիտէութիւնից, Ֆրեզնոյի տեղական մամուլը լայնօրէն անդրադարձել է Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման տոյն միջոցառումներին:

**Այս լուրերը տրամադրուած են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի
կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

Սոյն լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:

Լուրերը կարելի է վերատպել:

Լուրերի մանրամասնութիւնների համար կարդացէք «Ասպարտզ» օրաթերթը: